ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Կարոյի Ստեփանյանի

«ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՍԹՐԵՍԻՆ ՏՐՎՈՂ ՔՈՓԻՆԳ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» թեմայով

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Սույն ատենախոսական աշխատանքը նվիրված է ներկա ժամանակներում հույժ կարևոր հիմնախնդիրներից մեկին՝ կապված ժամանակակից պատերազմների յուրահատկությունների պայմաններում դրա մասնակիցների սոցիալ-հոգեբանական ռեադապտացիայի դժվարությունների հետ: Այստեղ ատենախոսը առանցքային տեղ է տալիս հաղթահարող վարքին ուղղված հոգեբանական դիրքորոշումներին ու վիճակներին: Թեման է՛լ ավելի է կարևորվում՝ պայմանավորված Հայաստանի 3-րդ հանրապետության նորանկախ տարիներից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածում պերմանենտ հակամարտությունների ու պատերազմների ընթացքով՝ իր ողջ բացասական և ողբերգական հետևանքներով: Հատկանշական է նաև, որ հիմնախնդիրը չունի աշխարհագրական, ազգային, մշակութային կամ քաղաքական լոկալիզացիա: Այն համամարդկային է և ցավոք մշտական: Սակայն ատենախոսը փորձել է դիտարկել երևույթը Հայաստանի սոցիալ-մշակութային կոնտեքստում:

Հետազոտական աշխատանքում շեշտադրվում է հետվնասվածքային անձնային աճի և հաղթահարող ռազմավարությունների փոխհարաբերակցությունը՝ բացահայտելու տրավմատիկ փորձառությունից հետո պատերազմի մասնակիցների վերահարմարման սոցիալ-հոգեբանական գործընթացները: Հանգամանալից

նկարագրված են պատերազմի սոցիալ-հոգեբանական բնութագրերը և մարտիկի հոգեվիճակներն ու դիրքորոշումները մարտական իրադրությունում:

Հիմնավոր ներկայացված են սթրեսի հիմնական տեսություններն ու մոտեցումները, հետվնասվածքային սթրեսային հոգեբանական դրսևորումներն ու դրանց արտացոլումը զինվորական գործունեությունում, դրանից հետո:

Մեծ հաշվով կատարված է տեսական համապարփակ վերլուծություն: Ատենախոսը քննադատական անդրադարձ է կատարել թեմային առընչվող հիմնարար տեսություններին, դրույթներին ու մոտեցումներին:

Հետաքրքրական է հատկապես ատենախոսի կողմից առաջադրված վարկածն առ այն, որ հաղթահարող ռազմավարության (վարքի) որևէ տեսակին հակվածությունը կարող է պայմանավորված լինել տեղի ունեցած հոգետրավմատիկ իրադարձության սթրեսային մակարդակով: Եվ այն իր բնութագրերով տարբերվում է պատերազմի մասնակիցների և ոչ մասնակիցների շրջանում:

Հետազոտական նպատակին հասնելու և առաջադրված խնդիրները լուծելու համար ատենախոսը կիրառել է ստանդարտացված թեստային մեթոդիկաներ, մաթ.վիճակագրական ապարատ՝ համապատասխան որակաքանակական վերլուծություններով:

Ընդհանուր առմամբ հետազոտության արդյունքում ստացվել են թեմային հարիր արժեքավոր տվյալներ, իսկ ատենախոսին հիմնականում հաջողվել է լուծել ատենախոսական աշխատանքում առաջադրված խնդիրներն ու հասնել նպատակակետին: Ավելին՝ հետազոտական աշխատանքի ամփոփման մեջ կատարվել են բարեփոխումներին ուղղված գիտագործնական արժեքավոր պրոֆեսիոնալ առաջարկություններ:

Անշուշտ, բոլոր առավելություններով և արժեքավոր հետազոտական արդյունքներով հանդերձ, աշխատանքում նկատվում են որոշ բացթողումներ և թերություններ:

Դիտողություններ

1. Ենթագլուխ 1.1-ում գերակշռում է դասագրքային ոճը, որը մասամբ նկատվում է նաև տեսական բաժնի առանձին պատառիկներում…
2. Ենթագլուխ 1.3-ում (էջ 47) հեղինակը հպանցիկ անդրադառնում է վախի ձևերին, սակայն դրանց սահմանումները տալիս է ոչ լիարժեք և բովանդակապես կրկնվող: Հատկապես հաշվի չի առնվում, որ նշված ձևերից որոշները (ահ, երկյուղ) գիտական եզրույթներ չեն, այլ ավելի շուտ երանգավորող հոմանիշներ են:
3. Կիրառված մեթոդների շարքում ատենախոսը նշում է նաև հարցազրույցի մեթոդը, սակայն ատենախոսական աշխատանքում հարցազրույցի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրում:
4. Աշխատանքում՝ հետազոտական խմբերի բնութագրումներում, չնկատեցի հետ-վնասվածքային սթրեսային խանգարման վերաբերյալ բժշկական ախտորոշումների փաստը… Արդյո՞ք մարտական գործողություններին մասնակից լինելու փաստը բավարար պայման է հետվնասվածքային սթրեսային խանգարում ունենալու համար, որի հիման վրա նախապես կազմվել են հետազոտական խմբեր:
5. Ատենախոսության սկզբնական մասում (հատկապես խնդիր 4-ում) նախանշված էր բացահայտել պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարությունների էությունը՝ հաշվի առնելով սոցիալ-մշակութային գործոնները, սակայն ես չգտա այդ կոնտեքստին ուղղված հիմնավոր հետազոտական արդյունքներ:
6. Առնվազն հարցեր են առաջանում, թե որքանո՞վ է էկոլոգիապես վալիդ միայն հարցարանային թեստավորման արդյունքներով որոշել, թե ինչ վարք են դրսևորում հետազոտվողները իրական (իրադրային) կյանքում, կամ ի՞նչպե՞ս է ստուգված, որ հետազոտության համապատասխան մասնակիցները իսկապես կիրառել են տվյալ քոփինգ ռազմավարությունը, կամ ի՞նչ նախկին ցուցանիշների հետ են համեմատվել նշված հատկանիշների փոփոխությունները՝ աճ գրանցելու և վարքային դրսևորումներ դիտարկելու համար: Մի քանի օրինակներ հեղինակի կողմից նման դատողությունների.

- «Պատերազմի մասնակիցները ցուցաբերում են ավելի մեծ անձնական ուժ…» էջ 107,
- «… ցուցաբերում են տարբեր մակարդակների հոգեբանական աճ:» էջ 108,
- «… սոցիալական կապերի և կարեկցանքի զգալի աճ…» էջ 108,
- «…Հոգևոր փոփոխություններ…» էջ 109 և 110,
- «… առանձնանում են ինքնատիրապետմամբ և խնդրի լուծման պլանավորմամբ, ինչը ցույց է տալիս կարճ, բայց ինտենսիվ փորձի ազդեցությունը նրանց <u>վարքային հակազդումների</u> վրա:» էջ 111),
- «…տրավման փոխակերպում է անհատի բարոյական հիմքերը <u>գործնական հմտությունների</u>:» էջ 140:

7. Ատենախոսության եզրակացությունները թեև դիպուկ են և արժեքավոր, սակայն կարող էին առավել հարուստ լինել՝ նվազեցնելու համար մեխանիկական պնդումները:

Թերությունների և բացթողումների վերաբերյալ վերոնշյալ դիտողություններն ու հարցադրումները չեն արժեզրկում կատարված աշխատանքը, այլ յուրահատուկ կերպով հուշում են համապատասխան անդրադարձեր կատարելու անհրաժեշտության մասին:

Եզրակացություն

Լիլիթ Կարոյի Ստեփանյանի «Պատերազմի մասնակիցների սթրեսին տրվող քոփինգ ռազմավարության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» խորագրով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքը արդիական, ինքնուրույն, ամբողջական, ավարտուն գիտագործնական արժեք ունեցող աշխատություն է, որը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտության թվանիշին: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից

ներկայացվող պահանջներին և արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը:

Լիլիթ Կարոյի Ստեփանյանը արժանի է ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հայցվող հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ,

հ. գ. թ. Հ. Ռ. Հովհաննիսյան

Ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտ. քարտուղար *Մ. Վ. Հովհաննիսյան*

«06», փետրվար, 2026 թ.